



ԵՐԱՌԵՍՏԱՅԻՆ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 34

ԳՈՀՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեմ.
 անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:
 Ես Տիրոջս դիմեցի, եւ աղօթիս պատասխանեց,
 զիս ազատեց բոլոր վախերէս:
 Տիրոջ մօտեցէ՛ք, որպէսզի ուրախութեամբ նստագայթէ՛ք,
 եւ յուսախար չէ՛ք ըլլար բնաւ:
 Տիրոջ հրեշտակը աստուածավախ մարդոց կողմին պահակ կը կանգնի,
 եւ փորձանքներէն զանոնք կ'ազատէ:
 Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն,
 ականջները միշտ պատրաստ են անոնց աղաչանքը լսելու:
 Երբ արդարը օգնութիւն կ'աղաղակէ՝ Տէրը կը լսէ,
 եւ զայն կ'ազատէ իր բոլոր նեղութիւններէն:
 Տէրը պատրաստ է արտաբեկներուն օգնելու,
 փրկելու յուսալուծ հոգիները:
 Արդարին նեղութիւնները որքան ալ շատ ըլլան,
 Տէրը կ'ազատէ բոլորէն ալ, եւ զայն անվնաս կը պահէ,
 թոյլ չտալով որ մէկ ոսկորն իսկ փշրուի:
 Տէրը կը փրկէ իրեն ծառայողները.
 դատապարտութիւն պիտի չունենան անոնք՝ որոնք իրեն կ'ապաւինին:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեղոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
 Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ թո՛ղ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ թո՛ղ արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԸ
ԾՆՆՂՈՑ 19 ԳԼԽ

ՄԵՂՍԱԿԻՑ ՍՈՂՈՍԸ (19:1-11)

«Ղովար Սողոմի դուռը նստեր էր...դիմաորելու ելա...մինչեւ գետին ծրելով խոնարհութիւն ըրա»:
Սողոմի դուռը նստիլ կը նշանակէ քաղաքի դուռին նստիլ, որպէսզի յանկարծ եթէ պարահեցաւ որ անձորդ կ'անցնի ներս հրաւիրէ: Դիմաորելու ելա, որ կը նշանակէ անտարբեր չգրնուեցաւ, ուզեց անպայման հրաւիրել իր փունը: Գետին ծրելով խոնարհիլ կը նշանակէ խոնարհութեան եւ շնորհակալութեան արտայայտութիւն, որ Տէրը զինք արժանի փեսած է որ հիւրընկալէ:

Այս հատուածին մէջ նաեւ ցոյց կը փրոտի Սողոմացիներուն բարոյական վարքագիծը, թէ անոնք միասեռականութեան ախարով վարակուած էին: Միւս կողմէ, Ղովարի մերժումը, եւ մինչեւ իսկ իր սեփական աղջիկները անոնց փոխարէն փալը, ցոյց կու տայ փանտերին պաշտպանութիւնը եւ նախանձախնդրութիւնը հանդէպ հիւրին:

Բայց արդէն Սողոմացիները լեցուած էին բարկութեամբ եւ իրենց արարքը զիրենք պիտի առաջնորդէ չարիքի. «Եղբայրներս, կ'աղաչեմ, չարութիւն մի՛ ընէք»: Միւս կողմէ նաեւ կը յանդիմանեն Ղովար թէ որպէս օտարական եկած է բարոյական դասեր փալու, օրէնքներ հաստատելու:

ՂՈՎՏ ԿԸ ՀԵՌԱՆԱՑ ՍՈՂՈՍԷՆ (19:12-22)

Հետաքրքրական հատուած մը, որ ցոյց կու տայ, թէ ինչպէս արդարի մը ներկայութիւնը նաեւ փրկութեան առիթ կ'ըլլայ ուրիշին: Այս պարագային Ղովարի կնոջ, աղջիկներուն, նոյնիսկ՝ փեսաներուն: Այս բոլորը ցոյց կու տան Աստուծոյ սէրը եւ ողորմութիւնը: Հակառակ այն իրողութեան, թէ Ղովարի կինը եւ անոր աղջիկները ինչ նկարագիր կամ վարմունք ունէին, բայց արդէն յետագային կը պարզուի անոնց մտածելակերպը, որ անոնք իրենց արդարութեան համար չէր որ փրկուեցան, այլ որովհետեւ Աստուած Ղովարին ողորմեցաւ:

Ղովար իր միջավայրին մէջ օրինակ էր, որպէսզի զինք փեսանոցները հաւատարմին, դարձի գային, ու փրկուէին: Բայց ափսոս անոնք մնացին անորդուելի, ինչպէս որ էր պարագան անոր փեսաներուն, որոնք չհաւատացին (նոյն էր պարագան Նոյի օրերուն): Բայց երբ ժամկէտը կը հասնի, արդարն ալ պէտք է դուրս գայ: Քրիստոս իֆչպոնէ կը յիշեցնէ ուրքի փոշին թօթուեցէք եւ դուրս եկէք այդ քաղաքէն:

Ահա պահը հասաւ որ քաղաքը կործանի, բայց Ղովար կը փնտրուի դուրս գալու: Ինչո՞ւ արդեօք կը փնտրուի: Արդեօք կը մտածէր իր անցեալի մասին, հարստութեան մասին, եւ սակայն հրեշտակները կը ստիպէին որ շուտով դուրս գայ հոնկէ: Որովհետեւ կարեւորը իր կեանքը փրկելն է եւ ոչ թէ իր ետին թողած ինչքերն ու սրացուածքները: «Անձո՞ղ ազատելու համար փախիր. ետիդ մի՛ նայիր, լեռ փախիր»: Նոյն խօսքերը կը կրկնէ Քրիստոս (Մատթ 24, Ղուկ 13): Լեռ չի նշանակեր անպայման բարձր փեղ, այլ կը նշանակէ փրկութեան անսայ: Ինչպէս պիտի ըսէ Սաղմոսերգուն. «Աչքերս դէպի լեռները պիտի վերցնեմ, ուրկէ իմ օգնութիւնս պիտի գայ, իմ օգնութիւնս Տիրոջմէն է որ պիտի գայ, որ երկինքն ու երկիրը սրեղծեց» (Սաղմ 121:1):

Այս բոլորը կը պարահին Տիրոջ անոր ողորմելովը: Ուրեմն մեր փրկութիւնը կախում ունի ոչ թէ մեր կարողութենէն կամ իմաստութենէն, այլ Աստուծոյ ողորմութենէն: Ուրեմն, փրկուելու համար պէտք է աճապարել, ու մանաւանդ՝ անհրաժեշտ է մոռնալ կապուածութիւնը, անցեալի դրուածքը, կեանքի ձեւը, ու մանաւանդ՝ մեղանշական կեանքը, այլ՝ նայիլ յառաջ, Նոր Կեանքին:

Բայց որովհետեւ Ղովար ի վիճակի չէ լեռ բարձրանալու կը խնդրէ որ մօտակայ ուրիշ փեղ մը երթայ: Խնդրանքը կը կատարուի, որովհետեւ մինչեւ դուրս չգայ Տէրը բան մը պիտի չընէ: Ղովար ի վիճակի չէր հոգեւոր իմաստով:

ՍՈՂՈՍԻ ՈՒ ԳՈՄՈՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ (19:23-29)

Մինչեւ որ արդարը նշանակուած փեղը չհասնի Տէրը ինք չի կործանէր: Եւ ահա ըսուածին համաձայն փեղի կ'ունենայ: Միւս կողմէ, նաեւ փրոտած պատուերին չհնազանդելով Ղովարի կինն ալ աղի արձան կը դառնայ: Հարցը պարագապէս ետին նայիլը չէր, այլ՝ այն կապուածութիւնը, որմէ պէտք է հրաժարիլ, որպէսզի կարենանք փրկութիւն ձեռք ձգել (Ղուկ 17:32):

ՍՈՎԱԲԻ ՈՒ ԱՄՍՈՆԻ ԾՆՈՒՆԴԸ (19:30-38)

Հետաքրքրական եւ փարօրինակ հատուած մը, որ սակայն Աստուածաշունչ Մատթանը մեզի կը ներկայացնէ դէպքերն ու դէմքերը այնպէս ինչպէս որ են, առանց շարքելու կամ ծածկելու: Ներկայացուած արարքը ընդունուած որեւէ ձեւով արդարացուցիչ չէ, եւ սա ցոյց կու տայ Ղովարի աղջիկներուն մտքի ապականութիւնը: Եւ այդ ապականութիւնը նաեւ եկած, Պօղոս Առաքեալի բացատրութեամբ. «Չար ընկերները մարդուս փառքը կ'ապականեն»: Անոնցմէ ծնածները կը ներկայացնեն երկու փարքեր ժողովուրդներ՝ Մովաբացիներ եւ Ամմոնացիներ, որ այս դրուագով ցոյց կը փրոտի հետագայ այդ ժողովուրդներուն բարոյական վիճակը: